



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Բ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Շ Ի Բ Ա Կ Ի Մ Ա Բ Ջ Պ Ե Տ

<< >> _____ 2019թ.

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: _____

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐՁ

ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի թատերական գործիչներ և թատերարվեստի երկրպագուներ, ընդունեք իմ ջերմ շնորհավորանքները՝ Ձեր մասնագիտական տոնի՝ Թատրոնի Միջազգային օրվա առթիվ:

Հայ թատրոնը հիրավի հարստացրել է մեր մշակույթը և այժմ էլ մեր թատերարվեստի ներկայացուցիչներն արժանապատվորեն շարունակում են ավանդույթներն՝ իսկական արվեստագետին վայել գործունեությամբ:

Հայ թատրոնի բազմադարյա պատմության մեջ Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնն ունի իր մնայուն տեղը: Նրա դերասանական կազմի նվիրվածության ու աշխատասիրության շնորհիվ թատերասերներին մատուցվել և մատուցվում են բարձրարվեստ ներկայացումներ: Բազում սերունդներ են դաստիարակվում բարու, գեղեցիկի և հայրենասիրության ոգով, յուրաքանչյուր թատերախաղ ոչ միայն իրադարձություն է, այլ յուրահատուկ ստեղծագործական հաշվետվություն տաղանդի երկրպագուների առջև:

Գովասանքի է արժանի նաև Գյումրու Ս. Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոնի ստեղծագործական խումբը, որը մշտապես պատվով է կատարում իր առաքելությունը մանուկ հանդիսատեսի առջև:

Թատրոնի՝ նվիրյալներ, թող լավատեսությունը, ստեղծագործական եռանդն ու ավյունը մշտապես լինեն ձեզ հետ՝ մղելով նոր ձեռքբերումների:

Ցանկանում եմ քաջառողջություն, ընտանեկան երջանկություն, ստեղծագործական բազում հաջողություններ:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ